ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ՀՈՎԻԿԻ

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՋԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔՈՒՄ

**ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն»
մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների
թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2016

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մ.Ս.Վարդանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ.Պ.Հովակիմյան

Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Գ.Հարությունյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2016թ. հունիսի 16-ին, ժամը 12^{00}-ին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. մայիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
մանկավարժական գիտությունների
թեկնածու, դոցենտ՝ Ա.Հ. ՍՎԱՋՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը: Քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային և մողովրդագրական տեղաշարժերի արդի ժամանակաշրջանում առանձնահատուկ

նշանակություն են ստանում ազգային կյանքին, ազգային-մշակութային արժեքներին և ազգային ինքնությանը վերաբերող հիմնահարցերը: Կյանքի բոլոր ոլորտներում իրականանում են գլոբալացման անշրջելի գործընթացներ, որոնք աստիճանաբար հանգեցնում են համամարդկային գլոբալ ինքնության ձևավորման: Այս պարագայում տարբեր ազգերի համար կարևոր խնդիր են աճող սերնդի կողմից ազգային ինքնության գիտակցումը, ազգային դիմագծի պահպանումը, ազգային-հոգևոր արժեքների ճանաչումը, յուրացումն ու իմաստավորումը: Ազգային ոգու, բնավորության, ինքնության գիտակցումը, ազգային նկարագրի և խորհրդանիշների իմացությունն անհրաժեշտ են նաև այլ ազգերի ներկայացուցիչների նկատմամբ հարգանքի ու հանդուրժողականության, միջմշակութային երկխոսության, բազմամշակութային աշխարհում ապրելու համար:

Նշված խնդիրների լուծման համար ի հայտ է գալիս հանրակրթության բնագավառում դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման մեթոդաբանական մոտեցումների հստակեցման անհրաժեշտությունն:

Ազգային ինքնագիտակցության էությունը հետազոտվել է դեռևս անտիկ ժամանակներից: Այդ խնդիրն ուսումնասիրվել է Արիստոտելի, Հիպոկրատի, Հերոդոտոսի աշխատություններում: Էթնիկ հանրության, ազգային ոգու, հոգևոր էության մասին կարևոր մտքեր են արտահայտել փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչները: Անձի ինքնագիտակցության ձևավորման տարբեր կողմեր հետազոտվել են Բ.Գ. Անանևի, Լ.Ս. Վիգոտսկու, Ն.Ա. Բերդյաևի, Է. Էրիքսոնի կողմից:

Անձի ազգային ինքնագիտակցության ձևավորման հոգեբանական, փիլիսոփայական տեսանկյունները հետազոտվել են Ա.Վ. Ախմերովայի, Ս.Լ. Ռուբինշտեյնի, Ա.Ա. Նալչաջյանի, Կ.Ա. Միրումյանի և այլոց կողմից: Ազգային ինքնագիտակցության կառուցվածքային բաղադրատարրերի քննությամբ են զբաղվել Յ.Վ. Հարությունյանը, Ա.Ա. Նալչաջյանը, Գ.Պ. Հովակիմյանը: Ազգա-յին ինքնագիտակցության ձևավորման առանձնահատու-թյուններին հետազոտու-թյուններ են նվիրել նաև Տ.Ս. Բուտորինան, Բ.Ա. Վյատկինը:

Ազգային դաստիարակության հիմնախնդիրներն արծարծվել են հայ մշակույթի նշանավոր գործիչների, գրողների, պատմաբանների, մանկավարժ-ների՝ Ստ. Նազարյանի, Մ. Նալբանդյանի, Ռաֆֆու, Խ. Աբովյանի, Լ.Ա. Խուրշուդյանի, Հ.Ա. Գևորգյանի, Ա.Ա. Նալչաջյանի, Ռ.Ա. Նահապետյանի, Ս.Ա. Արզումանյանի, Ա.Օ. Թոփուզյանի, Գ. Պ. Հովակիմյանի աշխատություններում:

Վերոնշյալ հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած հետազոտության հիմնախնդրի

տարբեր տեսանկյուններ խորությամբ հետա-զոտված են, այնուհանդերձ հիմնավորապես դիտարկված չեն դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման հարցերն ուսումնական և արտ-ուսումնական գործընթացում:

Կրթական բարեփոխումների համատեքստում կրթության բովանդակութ-յունը կառուցվում է՝ հաշվի առնելով անհատի բարոյական կերպարի և արժեքային համակարգի, ազգային նկարագրի ձևավորման անհրաժեշտու-թյունը: Տեսական և գործնական հետազոտությունները բացահայտեցին հա-կասություն մի կողմից ուսումնական տարբեր դասընթացների՝ որպես անձի ազգային ինքնագիտակցության զարգացման կարևոր միջոցի գիտակցման, մյուս կողմից՝ բնագիտամաթեմատիկական հոսքում դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացում այդ դասընթացների ներուժի ոչ բավականաչափ հաշվառման, բովանդակային և տեխնոլոգիական կողմերի ոչ լիարժեք մշակվածության միջև:

Նշված հակասությունը պայմանավորեց հետազոտության թեմայի ընտրու-թյունը՝ **«Սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոց-ները ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում»:**

Հետազոտության նպատակն է առաջադրել ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զար-գացման միջոցներ և հիմնավորել դրանց կիրառման մանկավարժական արդյունավետությունը:

Հետազոտության օբյեկտը ավագ դպրոցականների ազգային ինքնա-գիտակցության զարգացման գործընթացն է:

Հետազոտության առարկան ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման մանկա-վարժական միջոցներն են:

Հետազոտության վարկածն այն է, որ ուսուցման գործընթացում ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացումն արդյունավետ կիրականանա, եթե՝

- բացահայտվեն, վերլուծվեն և հիմնավորվեն ավագ դպրոցի բնագիտա-մաթեմատիկական հոսքում դասավանդվող առարկաների բովանդա-կային հնարավորությունները սովորողների ազգային ինքնագիտակ-ցության զարգացման տեսանկյունից,
- որոշվեն ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացվածության մակարդակները բնութագրող չափանիշները,
- ուսումնական գործընթացը հիմնվի ազգային ու համամարդկային հոգևոր արժեքների յուրացման, հասարակական-սոցիալական փորձի, ավագ դպրոցականների

տարիքային և անհատական առանձնահատկու-թյունների հաշվառման, գիտելիքների յուրացման գործնական ուղղվա-ծության վրա,

- ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում ներդրվեն փորձա-արարական այլընտրանքային կրթական ծրագրեր՝ ուղղված դպրոցա-կանների ազգային ինքնագիտակցության զարգացմանը,
- ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում կիրառ-վեն դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման մանկավարժորեն նպատակահարմար միջոցներ:

Հետազոտության խնդիրները.

1. Փիլիսոփայական, հոգեբանական, ազգագրական, սոցիալ-մշակութա-բանական հետազոտությունների և պատմագրական սկզբնաղբյուրների հիման վրա ուսումնասիրել «ազգ», «էթնոս», «ազգային ինքնագիտակ-ցություն» հասկացությունների էությունը:
2. Վերլուծել հանրակրթական ավագ դպրոցի բնագիտամաթեմատի-կական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման առկա վիճակը, բացահայտել ազգային ինքնագիտակցության զարգաց-վածության մակարդակները, մշակել այդ մակարդակները բնութագրող չափանիշները:
3. Բացահայտել ուսումնական դասընթացների կրթադաստիարակչական ներուժը ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զար-գացման գործում:
4. Մշակել «Հայ գրականություն և ազգագրություն» փորձարարական այլընտրանքային կրթական ծրագրի թեմատիկա և հիմնավորել դրա ուսումնասիրման մանկավարժական արդյունավետությունը դպրոցական-ների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում:
5. Առաջադրել ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոցների համալիրը և փորձարարությամբ ստուգել դրաարդյունավետությունը:

Հետազոտության տեսական-մեթոդաբանական հիմք են հանդիսացել՝

- «ազգ», «էթնոս», «ազգային ինքնագիտակցություն» հասկացությունների վերլուծությանը նվիրված փիլիսոփայական, հոգեբանական, սոցիո-լոգիական տեսությունները, պատմագրական և ազգագրական նյութերը,
- անձի ազգային ինքնագիտակցության ձևավորման վերաբերյալ փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական հայեցակարգերը,

• էթնիկ խմբերի ինքնագիտակցության ուսումնասիրությանը նվիրված տեսությունները (Ա. Լ. Անդրեև, Ի. Ն. Աֆանասև, Յ. Վ. Բրոմլեյ, Կ. Լևի-Սթրոս, Վ. Վունդտ, Կ. Յունգ և այլք),

• ազգային հատկանիշներին ու դրանց ձևավորման գործոններին նվիրված էթնոսոցիոլոգիական, էթնոհոգեբանական, էթնոմանկավարժական հայեցակարգերը (Լ.Մ. Դրոբիժևա, Գ.Ն. Վոլկով, Լ.Ն. Գումիլյով, Գ.Ու. Սոլդատովա, Յ.Ս. Տյուննիկով, Ա.Ա. Նալչաջյան, Գ.Պ. Հովակիմյան և այլք),

• կրթական գործընթացում դպրոցականների ազգային ինքնագիտակ-ցության զարգացման առանձնահատկությունների վերլուծությանը նվիր-ված ուսումնասիրությունները, ազգային և համամարդկային արժեք-ներին նվիրված հայեցակարգերը (Ն.Գ. Այվարովա, Ա.Վ. Ախմերովա, Ա.Վ. Իվանով, Ի.Վ. Իլյինա, Դ.Վ. Եֆիմովա, Ա.Բ. Պանկին, Ս.Ա. Ռետենգեր, Է.Կ. Սուսլովա, Լ.Ա. Գարանին, Գ.Ա. Գելլեր, Ռ.Ա. Մարդոյան),

• տարիքային առանձնահատկություններին, անձնակենտրոն կրթու-թյանը և ուսուցման նորագույն տեխնոլոգիաների կիրառմանը նվիր-ված տեսությունները (Վ.Ս. Մուխինա, Գ.Կ. Սելևկո, Ն.Լ. Սելիվանովա, Ս.Ն. Սմիռնով, Է. Էրիքսոն, Մ.Գ. Աստվածատրյան, Հ.Հ. Պետրոսյան),

• կրթության բովանդակության մեջ ազգային բաղադրատարրերի նշա-նակության գիտակցմանը նվիրված հայեցակարգերը (Բ.Ս. Գերշունսկի, Օ.Կ. Գոժևա, Վ.Բ. Նովիչկով, Է.Կ. Սուսլովա, Վ.Յ. Խոտինեց):

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են **տեսական և էմպիրիկ հետազոտության հետևյալ մեթոդները՝**

• հետազոտության հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգե-բանամանկավարժական, ազգագրական, սոցիոլոգիական և մասնա-գիտական գրականության, կրթության բովանդակությունը կանոնա-կարգող նորմատիվային փաստաթղթերի վերլուծություն, համադրում,

• կրթության բովանդակությունն արտահայտող փաստաթղթերի՝ առար-կայական չափորոշիչների, ծրագրերի, դասագրքերի վերլուծություն,

• էմպիրիկ հետազոտության մեթոդներ՝ դիտում, զրույց, անկետավորում, մանկավարժական փորձարարություն:

Հետազոտության բազան են հանդիսացել Արարատի մարզի Ոսկետափի, Վեդիի, Երևանի Ավ. Իսահակյանի անվան թիվ 16, Բենիամին Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոցները:

Հետազոտությունն իրականացել է 3 փուլով.

Առաջին փուլում (2009-2010թթ.) ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդրին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, ազգագրական, մասնագիտական գրականություն, որոշվել են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, ճշգրտվել են հետազոտության հիմնական ուղղությունները, առաջադրվել է օբյեկտը, որոշվել են հետազոտության առարկան, նպատակը, ձևակերպվել է հետազոտության վարկածը:

Երկրորդ փուլում (2010-2011թթ.) մշակվել են հարցաթերթիկներ, փորձա-արարական հետազոտության բազա հանդիսացած դպրոցներում ձևավորվել են ստուգողական և փորձարարական խմբեր, անցկացվել է հաստատող փորձարարությունը, վերլուծվել և համակարգվել են ստացված տվյալները:

Երրորդ փուլում (2011-2012թթ.) իրականացել են ավագ դպրոցական-ների ազգային ինքնագիտակցության զարգացմանն ուղղված աշխատանքներ, վերլուծվել և ընդհանրացվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները, հիմնավորվել է կիրառված միջոցների մանկավարժական արդյունավետությունը, հետազոտության արդյունքներն արտացոլվել են համա-պատասխան աղյուսակներում և գծապատկերներում:

Հետազոտության գիտական նորույթը.

- Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, սոցիալ-մշակութա-բանական և ազգագրական տեսանկյուններից դիտարկվել և հետա-զոտության հիմնախնդրի շրջանակներում տրվել է «ազգային ինքնա-գիտակցություն» հասկացության ընդհանրացված բնութագիրը, ըստ որի՝ ազգային ինքնագիտակցությունը ազգի կենսագործունեության էթնոտարբերակիչ և էթնոմիավորիչ հատկանիշների, գիտակցված պատկերացումների ու գնահատումների համեմատաբար կայուն համա-կարգ է:
- Բացահայտվել և հիմնավորվել է ավագ դպրոցի բնագիտամաթեմա-տիկական հոսքում դասավանդվող ուսումնական առարկաների կրթա-դաստիարակչական ներուժը ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում:
- Որոշվել են ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի կառուցվածքային բաղադրատարրերը, ազգային ինքնագիտակցության զարգացվածության մակարդակներն ու դրանք բնութագրող չափանիշները:
- Ներկայացվել են ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոց-

ները, որոնք ներառում են մեր կողմից մշակված «Հայ գրականություն և ազգագրություն» այլընտրանքային կրթական ծրագրի և դասղեկի ժամերի համար հանձնարարելի թեմատիկաները, էքսկուրսիաները, այցելությունները մշակութային օջախներ, պատմամշակութապատմա-կան հուշարձաններ ունեցող վայրեր, տարաբնույթ դաստիարակչական միջոցառումները, բանավեճերը, իմացական և դերային խաղերը, հան-դիպումները մշակույթի գործիչների, գրողների, հերոս զինվորների և ռազմական գործիչների հետ:

Հետազոտության տեսական նշանակությունը.

1. Հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում համակարգվել են ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի վերաբերյալ տեսական հայեցակարգերը, ճշգրտվել են այդ գործընթացի բովանդակության իմացական, գնահատողական, վարքային-գործունային բաղադրա-տարրերը և դրանք բնութագրող չափանիշները:
2. Տեսականորեն հիմնավորվել են ավագ դպրոցի բնագիտամաթեմատի-կական հոսքում ուսումնական առարկաների հնարավորությունները սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում:
3. Տեսականորեն հիմնավորվել են ուսումնական և արտաուսումնական գործընթացում ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման նպատակահարմար միջոցները և դրանց իրացման մանկա-վարժական պայմանները:

Հետազոտության գործնական նշանակությունը.

1. Տեսական և գործնական հետազոտության արդյունքները կարող են կիրառվել հանրակրթական դպրոցի տարբեր աստիճաններում, նախնա-կան և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման, մանկա-վարժների մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման ուղղու-թյամբ:
2. Հետազոտությունը կարող է օգտակար լինել ուսուցիչների վերա-պատրաստման, առարկայական չափորոշիչների, դասղեկի ժամերի թեմատիկայի մշակման, ինչպես նաև՝ սոցիալ-մշակութային բովանդա-կություն ունեցող գործընթացների վերլուծության, ախտորոշման և գնահատման համար:

Պաշտպանությանն են ներկայացվում հետևյալ դրույթները.

1. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացումը ոչ միայն ազգային, այլև

համամարդկային հիմնախնդիր է, որի լուծումը հատկապես արդիական է աշխարհաքաղաքական տեղաշարժերի և գլոբալացման արդի ժամանակաշրջանում:

2. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցությունն արդյունա-վետ է իրականանում մանկավարժական համակարգված, նպատակա-ուղղված ներգործության պայմաններում՝ կրթության բովանդակության մեջ ազգային բաղադրատարրի շեշտադրմամբ:
3. Ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի բովան-դակային բաղադրատարրերը բնութագրում են անձի իմացական, գնա-հատողական, վարքային-գործունային ոլորտները. ազգի պատմական ակունքների, խորհրդանիշների, նյութական և հոգևոր մշակույթի, ազգային նկարագրի, ոգու և բնավորության իմացությունը հուզական ընկալումների հիման վրա վերածվում է հայացքների, համոզմունքների, գնահատողական վերաբերմունքի, իր ազգային ինքնության գի- տակցման և համարժեք վարքի դրսևորման:
4. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցությունն արդյու-նավետ է զարգանում ուսումնական և արտաուսումնական գործու-նեության ընթացքում նրանց տարիքային առանձնահատկությունների հաշվառման, նպատակահարմար մեթոդների, միջոցների ընտրության և մանկավարժական ներգործության ճկուն ձևերի կիրառման պայ-մաններում:
5. Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման համար առաջարկվող միջոցների մանկավարժական արդյունավետությունն ապահովվում է մանկավարժների մասնագիտական կոմպետենտությամբ, կրթական զարգացնող միջավայրի ձևավորմամբ, ուսումնական և արտաուսում-նական գործընթացում սուբյեկտ-սուբյեկտփոխներգործությամբ:

Հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունն ապահովված են մեթոդաբանական հիմքերի ու տեսական հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության տրամաբանու-թյանը, օբյեկտին, առարկային, նպատակին, խնդիրներին համարժեք օգտա-գործված տեսական և էմպիրիկ մեթոդներով, մանկավարժական փորձարա-ության համակարգված բնույթով, ստացված արդյունքների վերլուծությամբ, մեկնաբանմամբ, եզրակացությունների հիմնավորվածությամբ:

Հետազոտության փորձաքննությունն իրականացել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի ընդհանուր մանկավարժության ամբիոնի նիստերում, փորձարարության բազա հանդիսացած դպրոցներում, ատենախոսության թեման արտացոլող գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը կազմում է համակարգչային 157 էջ, այն ներառում է 11 աղյուսակ, 7 գծապատկեր, 4 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են նպատակը, օբյեկտը, առարկան, խնդիր-ները, գիտական վարկածը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող դրույթները:

Ատենախոսության՝ **«Անձի ազգային ինքնագիտակցության զարգացման գիտատեսական հիմնավորումը»** խորագիրը կրող առաջին գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ ««Ազգ», «Էթնոս» հասկացությունների փիլիսոփայական, սոցիալ-մշակութաբանական և հոգեբանական մեկնաբանումը» ենթագլխում «ազգ», «էթնոս» հասկացությունների էությունը հստակեցնելու նպատակով դիտարկված են մի շարք փիլիսոփայական, մանկավարժական, սոցիալ-հոգեբանական մոտեցումներ, տեսություններ:

Հիմնավորված է, որ ժողովրդի էթնոհոգեբանական գծերը սերտ փոխազդեցության մեջ են նրա պատմության և մշակույթի հետ: Ազգային բնավորության ձևավորման և զարգացման օրինաչափություններն իրականանում են ազգային ինքնագիտակցության զարգացման տարբեր փուլերում: Յուրաքանչյուր ազգ ունի իր յուրահատուկ հոգևոր ներաշխարհը, որն արտացոլում է նրա սոցիա-լական, աշխարհագրական, լեզվական և այլ առանձնահատկությունները՝ ամփոփված նրա ավանդույթներում, սովորույթներում, բարքերում:

Էթնոսի գործառույթների մեջ կարևոր դեր է վերապահված նրա անդամ-ների կողմից իրենց որպես յուրահատուկ հանրության գիտակցմանը, այսինքն՝ ինքնագիտակցությանը, որն էլ ըմբռնվում է որպես ազգերի և ազգային հանրությունների ազգային ինքնագիտակցություն:

««Ազգային ինքնագիտակցություն» հասկացության վերլուծությունը» խորագրով երկրորդ ենթագլխում հիմնավորվել է, որ ազգային-մշակութային մի շարք հիմնախնդիրներ կապված են ոչ միայն ազգային մտածողության յուրահատկության, ազգի հոգևոր նկարագրի և մարդու գիտակցական ոլորտների հետ, այլև մեծապես պայմանավորված են հասարակական կյանքի տեղաշարժերով: Դա պահանջում է էթնոսոցիալական և էթնոմշակութային գործընթացների համակողմանի ուսումնասիրություն միջազգային հարաբերությունների ձևավորման և վերակառուցման համատեքստում, ազգային և համա-մարդկային մշակութային արժեքների պահպանման ու փոխպայմանավորվածության համակարգում:

Ազգային ինքնագիտակցության կառուցվածքում կարևորվել է ազգի սոցիալական հիշողությունը, որի շնորհիվ սերնդեսերունդ փոխանցվում են ազգի կյանքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունները: Անդրադարձ է կատարվել ազգային ինքնագիտակցության կարևոր տարրերին՝ տեղանուններին (տոպո-նիմիկա) և հատուկ անուններին՝ անվանաբանությանը (օնոմաստիկա), որոնք ազգի և առանձին անհատների գիտակցության մեջ պահպանում և վերարտադրում են ժողովրդի կենսափորձը, ազգային-մշակութային փոխհարաբերությունները, երևույթներն ու իրադարձությունները:

Երրորդ՝ «Հայ ազգային-հոգևոր նկարագիրը պատմագրական, ազգագրական, հոգեբանական և սոցիալ-մշակութաբանական տեսանկյուն-ներից» ենթագլխում դիտարկվել են հետազոտության հիմնախնդրի առումով կարևոր հարցերի պատմական, ազգային, սոցիալ-մշակութային հիմքերը: Դեռևս հնագույն ժամանակներից կերտելով իր պատմությունն ու ազգային մշակույթը՝ հայ ազգը դրանցում արտացոլել է իր ազգային բնավորությունը, խառնվածքը, ինքնագիտակցությունը, մտածելակերպը, ինքնությունը, աշխարհընկալումն ու աշխարհըմբռնումը: Հիմնավորվել է, որ ազգային մշակույթը ժամանակի փորձությանը, հազարամյակի մարտահրավերներին դիմակայելու, ազգային ինքնության պահպանման հզոր գործոն է. մշակույթի մեջ են ամփոփված ազգապահպան ռազմավարությունները: Ազգային մշակույթի և ինքնության պահպանումը, ազգային-մշակութային պաշտպանական կառույց-ների ստեղծումը հատկապես կարևոր են մեծ սփյուռք ունեցող հայության համար. օտար միջավայրում բազմաթիվ գործոնների ազդեցությամբ աշխարհասփյուռ հայությունը դժվար թե դիմակայեր ձուլմանն ու ազգային կերպի աղավաղմանը, եթե չունենար իր մշակույթի մեջ ամրակայված ազգային հոգեկերտվածքի խտացումը:

Ատենախոսության **երկրորդ՝ «Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման հիմնախնդիրը**

ազգային դաստիարակու-թյան համատեքստում» խորագիրը կրող գլուխը բաղկացած է երեք ենթա-գլխից:

Առաջին՝ «Անձի ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի առանձնահատկությունները, բովանդակային բաղադրատարրերը» ենթագլխում հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից բացահայտվել, տեսականորեն հիմնավորվել և բնութագրվել են ազգային ինքնագիտակցու-թյան զարգացման գործընթացի առանձնահատկությունները, բովանդակային բաղադրատարրերը:

Հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների վերլուծությունը թույլ տվեց որոշակիացնել և ընդհանրացնել ազգային ինքնագիտակցության ձևավորման առանձնահատկություններն ըստ տարիքային կենսափուլերի: Բնութագրվել են օնտոգենեզում ազգային ինքնագիտակցության զարգացման փուլերը:

Ներկայացվել են ազգային ինքնագիտակցության հետևյալ կառուցվածքային բաղադրատարրերը՝ իմացական, գնահատողական, վարքային-գործունային: Դիտարկվել, առանձնացվել և բնութագրվել են անձի ինքնագիտակցության զարգացման մակարդակները և դրանք բնութագրող չափանիշները:

Երկրորդ ենթագլխում՝ «Ուսումնական առարկաների և դասղեկի ժամե-րի հնարավորություններն ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացում», վերլուծելով ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի կրթության բովանդակությունն արտա-հայտող փաստաթղթերը, բացահայտվել է, որ մի շարք առարկաներ ունեն հետազոտության հիմնախնդրի լուծման ուղղությամբ բավականաչափ հնա-րավորություններ, այսինքն՝ կարող են ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման կարևոր միջոց դառնալ:

Հանգամանորեն ուսումնասիրվել են «Հասարակագիտություն», «Հայոց լե-զու և գրականություն», «Անգլերեն», «Աշխարհագրություն», «Հայոց պատմու-թյուն» և «Համաշխարհային պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Կենսաբանություն», «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր», «Երկրաչափություն» դասընթացների առարկայական չափորոշիչները, ծրագ-րերը, դասագրքերը՝ բացահայտելով այդ դասընթացների ներուժը հետա-զոտության հիմնախնդրի շրջանակներում:

Ուսումնական դասընթացներից բացի ազգային-հոգևոր դաստիարակություն իրականացնելու առումով կարևորվել են դասղեկի ժամերը:

Երրորդ՝ «Գրականությունը՝ որպես անձի ազգային ինքնագիտակցու-թյան զարգացման առավել արդյունավետ

միջոց» ենթագլխում հիմնավորվել է գրական ժառանգության դերը ոչ միայն ազգային ինքնագիտակցության զարգացման, այլև աշխարհաճանաչողության և իրականության գեղագիտական յուրացման գործում:

Հետազոտության շրջանակներում հայ գրականության դասավանդման արդի վիճակի վերաբերյալ արված ուսումնասիրությունների հիման վրա ազգային ինքնագիտակցության զարգացման տեսանկյունից մեր կողմից բացահայտվել են ավագ դպրոցի ընդհանուր և հոսքային դասարաններում հայ գրականության դասավանդման գործընթացի զարգացման միտումները և ուղղությունները՝

- ազգային մշակույթի խոր իմաստավորում՝ բանահյուսական նյութերի ուսումնասիրման ճանապարհով,
- կրթական բոլոր աստիճանների (տարրական, միջին, ավագ դպրոց) հաջորդականության և գաղափարական ուղղվածության ապահովում՝ ըստ հետազոտության հիմնախնդրի,
- գրական արժեքների (հին, միջնադարյան, նոր, նորագույն, արևելահայ, արևմտահայ, սփյուռքահայ շրջաններ) համակարգված յուրացում՝ իրենց զարգացման ներքին օրինաչափություններով և առանձնահատկություն-ներով:

Ատենախոսության երրորդ՝ «Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանն ուղղված աշխատանքները և մանկավարժական փորձարարության արդյունքները» խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացվածության առկա մակարդակների վերլուծությունը» ենթագլխում ներկայացվել և հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից հիմնավորվել են ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացվածության մակարդակի բացահայտմանն ուղղված փորձարարական հետազոտության արդյունքները՝ ըստ մեր կողմից մշակված չափանիշների, որոնք ներկայացված են թիվ 1 աղյուսակում: Իրականացված սոցհարցմամբ նախատեսված էր պարզել հայրենի բնաշխարհի, հայ ազգի հոգևոր նկարագրի և ազգային ոգու վերաբերյալ աշակերտների գիտելիքների և հուզական-գնահատողական որակների մակարդակը, բացահայտել ազգային հիմնարար արժեքների (ազգ, հայրենիք, լեզու, հավատ, պետականություն, անկախություն, հավաքականություն, ազգային ոգի և հոգեկերտվածք, ազգասիրություն, համե-րաշխություն, մշակույթ և այլն) վերաբերյալ պատկերացումները:

Սոցհարցման արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտների 14%-ը ստուգողական խմբում և 13%-ը փորձարարական խմբում հաջողությամբ կատա-րել են առաջադրանքը, տրամաբանված և իմաստային առումով համոզիչ բնութագրել են ազգային հիմնարար արժեքները, հիմնավորել օրինակներով:

Ստուգողական խմբում 42% և փորձարարական խմբում 45% աշակերտներ որոշակի գիտելիքներ ունեն ազգային արժեքների վերաբերյալ, սակայն խորությամբ չեն բնութագրել և օրինակներով չեն հիմնավորել: Ստուգողական խմբում հարցվածների 44%-ը և փորձարարական խմբում 42%-ը կամ պատասխանատվությամբ չի վերաբերվել հարցմանը, կամ մակերեսային, ոչ լիարժեք դատողություններ է կատարել:

Ի մի բերելով նկարագրված հարցումների, զրույցների, դիտումների արդյունքները՝ բնութագրվել են ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների մայրենի լեզվի և ազգային հիմնարար արժեքների տիրապետման բարձր, միջին և ցածր մակարդակները:

Սոցհարցման միջոցով բացահայտվել են մայրենիի տիրապետման և ազգային հիմնարար արժեքների իմացության, ինչպես նաև ազգային ինքնա-գիտակցության իմացական, գնահատողական, վարքային-գործունային բաղադ-րատարրերի զարգացվածության մակարդակները, հաստատող փուլում ներկա-յացվել են մանկավարժական փորձարարության արդյունքները աղյուսակների և գծապատկերների տեսքով:

Երկրորդ՝ «Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոցներն ու մեթոդները» ենթագլխում բացահայտվել, նախա-նշվել են ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքում սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացման արդյունավետ իրականացման մանկավարժական միջոցներն ու պայմանները՝

- համապատասխան բովանդակությամբ այլընտրանքային կրթական ծրագրերի ներառումը,
- դասղեկի ժամերի՝ ըստ մշակված թեմատիկայի նպատակային կիրառումը, էքսկուրսիաները, այցելությունները մշակութային օջախներ, պատմաճարտարապետական հուշարձաններ ունեցող վայրեր, տարաբնույթ դաստիարակչական միջոցառումները, բանավեճերը, իմացական և դերային խաղերը, բեմականացումները, հանդիպումները մշակույթի գործիչների, գրողների և ռազմական գործիչների հետ,
- ուսումնական և արտաուսումնական գործունեության ընթացքում ինտերակտիվ հաղորդակցման միջավայրի ապահովումը,

- դպրոցականների մեջ ազգային-մշակութային արժեքների ձևավորման համար դասավանդող ուսուցիչների մասնագիտական բարձր կոմպե-տենցիաները,
- ազգային պատմության, մշակույթի, ծագումնաբանության, ազգային արժեհամակարգի և հոգեկերտվածքի նկատմամբ դպրոցականների մեջ հետաքրքրության արթնացումը,
- սովորողների անհատական առանձնահատկությունների և ուսումնա-ճանաչողական դրդապատճառների հաշվառումը,
- ուսումնական բոլոր դասընթացների համապատասխան ներուժի շեշտադրումը, կրթական զարգացնող միջավայրի ձևավորումը,
- մանկավարժական ներգործության ճկուն ձևերի կիրառումը, սուբյեկտ-սուբյեկտ փոխներգործությունը:

Հիմնավորվել է, որ ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման կարևոր պայման է կրթության բովանդակության մեջ ազգային բաղադրատարրի շեշտադրումը: Առաջադրվել են դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման ուղղությամբ նպատակների երեք հիմ-նական խմբեր, որոնք ուղղված են ազգային ինքնագիտակցության իմացական, գնահատողական և վարքային-գործունային բաղադրատարրերի զարգացմանը:

Տեսական և փորձարարական հետազոտության ընթացքում առաջադրվել է «Հայ գրականություն և ազգագրություն» այլընտրանքային կրթական ծրագրի թեմատիկա, առանձնացվել են թեմատիկ խմբեր, որոնք ընդգրկում են դպրոցականի անձի վրագրական երկի, ազգային և հոգևոր երաժշտության, ազգային պարի, տարազի, տոների, ավանդույթների ու սովորույթների դաստիարակչական ներգործության տարբեր ոլորտները: Դրանք այն միջոց-ներն են, որոնք նպատակաուղղված են սովորողների ազգային ինքնա-գիտակցության ամբողջական զարգացմանը, և պայմանականորեն դասա-կարգվում են տարածքային, ժամանակային, պատմական, ռազմական, տնտեսական, քաղաքական, մշակութային, հոգևոր-բարոյական և այլ խմբերի: Ներկայացված և հիմնավորված են ավագ դպրոցի ուսուցման գործընթացում սովորողների ազգային ինքնագիտակցության ձևավորման նպատակահարմար մեթոդներն ու ձևերը:

Որպես ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգաց-ման գործոն դիտարկվել է ուսուցչի մասնագիտամանկավարժական կոմպետեն-տության հարցը:

Երրորդ՝ «Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացմանն ուղղված փորձարարական

աշխատանքների վերլուծությունը» ենթագլխում ներկայացվել է փորձարարական հետազոտության նպատակը, աշխատանքի փուլերը, մեթոդները, վերլուծվել են հարցումների արդյունքները:

Փորձարարության ձևավորող փուլում փորձարարական խմբերում ներդրվել է «Հայ գրականություն և ազգագրություն» այլընտրանքային կրթական ծրագրի թեմատիկան: Նպատակուղղված մանկավարժական գործունեությունն իրակա-նացվել է զրույցների, բանավեճերի, քննարկումների, դասախոսությունների, դերային և գործնական խաղերի, թիմային ու անհատական հետազոտական նախագծերի, ուսումնական և արտաուսումնական գործունեության այլ ձևերի ընթացքում: Մշակվել են առաջադրանքներ, մոդելավորվել են մանկավարժական իրավիճակներ, ինքնուրույն աշխատանքների, ուսումնահետազոտական նա-խագծերի թեմաներ:

Մանկավարժական փորձարարության վերջում արձանագրվել են ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության իմացական, գնահատո-ղական, վարքային-գործունային բաղադրատարրերի զարգացվածության մա-կարդակները, որոնցում ակնհայտ է արդյունքների դրական աճը փորձարա-րական խմբերում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՑԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԻ ՁԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ			ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ		
	Սկիզբ	Վերջ	Տարբ.	Սկիզբ	Վերջ	Տարբ.
Բարձր	22	38	+16	22	68	+46
Միջին	41	35	-6	44	30	-14
Ցածր	37	27	-10	34	2	-32



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՑԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԻ ՁԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ

Այսպիսով՝ ստացված տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ փորձարարական խմբում գերակշռում են ազգային ինքնագիտակցության իմացական բաղադրատարրի զարգացվածության բարձր և միջին մակարդակ-ները, զգալիորեն նվազել է ցածր մակարդակ ունեցող աշակերտների թիվը:

ԱՂՅՈՒՍԱԿ 2

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԻ ՁԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ			ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ		
	Սկիզբ	Վերջ	Տարբ.	Սկիզբ	Վերջ	Տարբ.
Բարձր	22	31	+9	23	61	38
Միջին	45	42	-3	43	32	-11
Ցածր	33	27	-6	34	6	-28



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԻ ՁԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ

Ստուգողական խմբում փորձարարության վերջում ստացված արդյունքների տարբերությունը նախկինում ստացված արդյունքների համեմատությամբ նշանակալի չէ. դա բացատրվում է նրանով, որ նշված խմբում մանկավարժական նպատակաուղղված ներգործություն չի կիրառվել:

ԱՂՅՈՒՍԱԿ 3

ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ-ԳՈՐԾՈՒՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԻ ՁԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ	ՍՏՈՒԳ. ԽՈՒՄԲ			ՓՈՐՁ. ԽՈՒՄԲ		
	Սկիզբ	Վերջ	Տարբ.	Սկիզբ	Վերջ	Տարբ.
Բարձր	24	41	+17	25	62	+37
Միջին	44	35	-9	42	31	-11
Ցածր	32	24	-8	33	7	-26



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ԱՎԱԳ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՔԱՅԻՆ-ԳՈՐԾՈՒՆԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԱՏԱՐՐԻ ՁԱՐԳԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՄ ԵՎ ՎԵՐՋՈՒՄ

Հետազոտության ընդհանուր արդյունքները ցույց են տալիս, որ ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործընթացի արդյունավետությունն ապահովվում է մանկավարժական բոլոր միջոցների հա-մալիր կիրառմամբ և ուսումնադաստիարակչական ամբողջական համակար-գի բոլոր բաղադրատարրերի փոխկապակցված, ներդաշնակ գործունեությամբ:

Հետազոտությամբ ստացված արդյունքները հավաստեցին առաջարկված գիտական վարկածի ճշմարտացիությունը՝ թույլ տալով ձևակերպել հետևյալ **եզրակացությունները.**

1. Անձի ազգային ինքնագիտակցության զարգացումը ոչ միայն ազգային, այլև համամարդկային հիմնախնդիր է և արդյունավետորեն է լուծվում մանկավարժական համակարգված, նպատակաուղղված գործընթացում:
2. Կրթության բովանդակության մեջ ազգային բաղադրատարրի շեշ-տադրումը նշանակում է դպրոցականների մեջ ձևավորել իր ժողովրդի պատմության և մշակույթի նկատմամբ հարգանք, միջմշակութային երկխոսության մշակույթ, ազգային ինքնագիտակցություն և արժե-համակարգ՝ համաշխարհայնացման արդի գործընթացներում ազգային դիմագիծը պահպանելու և համամարդկային արժեքները գնահատելու համար:
3. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման բովանդակությունը ներառում է

իմացական,գնահատողական, վարքային-գործունային բաղադրատարրերը՝ ազգային նկարագրի, ոգու և հոգե-կերտվածքի իմացության հիման վրա գնահատողական վերաբերմունքի և համարժեք վարքագծի դրսևորմամբ:

4. Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի ուսումնական դասընթացների՝ առարկայական չափորոշիչներով և ծրագրերով սահմանված բովանդակության վերլուծությունը բացահայտեց հիմնախնդրի լուծման ուղղությամբ առկա բովանդակային հնարավորությունները հատկապես հումանիտար առարկաներում: Սովորողների ազգային ինքնագիտակցության զարգացումն արդյունավետ իրականացնելու համար պետք է խորապես հաշվի առնել և շեշտադրել այդ հնարա-վորությունները՝ուսումնական սուղ ժամաքանակի պայմաններում սովո-րողներին տրամադրելով լրացուցիչ տեղեկատվություն և զարգացնելով ինքնուրույն աշխատանքի կարողությունները:

5. Ավագ դպրոցի բնագիտամաթեմատիկական հոսքի «Հայ գրականու-թյուն» դասընթացին հատկացված ժամաքանակը հնարավորություն չի տալիս լիարժեքորեն լուծել դպրոցականների ազգային ինքնագիտակ-ցության զարգացման հիմնախնդիրը: Այդ խնդրի արդյունավետ լուծման համար նպատակահարմար է նշված հոսքի հենքային ուսումնական պլանի դպրոցական կամ նախասիրական բաղադրիչում ներդնել դասընթացներ՝ բանահյուսական նմուշների, ազգային-հայրենասիրական շեշտված բովանդակությամբ գրական ստեղծագործությունների, ազ-գագրական նյութերի ընդգրկմամբ:

6. Ավագ դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման միջոցներ են ուսումնական դասընթացների հնարավորությունների և դասղեկի ժամերի նպատակային կիրառումը, այլընտրանքային կրթական ծրագրերը, էքսկուրսիաները, այցելությունները մշակութային օջախներ, պատմամշակութային ապատմական հուշարձաններ ունեցող վայրեր, տա-բաբնույթ դաստիարակչական միջոցառումները, բանավեճերը, իմա-ցական և դերային խաղերը, հանդիպումները մշակույթի գործիչների, գրողների, հերոս զինվորների և ռազմական գործիչների հետ:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ **հրապարակումներում.**

1. Մկրտչյան Տ.Հ., Դպրոցականների ազգային-հոգևոր դաստիարակու-թյունն ավագ դպրոցում,

«Մանկավարժություն» գիտամեթոդական վեր-լուծական ամսագիր, էջ 19-23, N 5. 2011թ.:
2. Մկրտչյան Տ.Հ., Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքի ուսուցումը, «Հայոց լեզու և գրականություն» գիտամեթոդական ամսագիր, էջ 44-48, N 4. 2011թ.:
3. Մկրտչյան Տ.Հ., Գրականության դերը դպրոցականների ազգային ինքնագիտակցության զարգացման գործում, «Մանկավարժություն» գի-տամեթոդական վերլուծական ամսագիր, էջ 18-24, N 8. 2012թ.:
4. Մկրտչյան Տ.Հ., Ավագ դպրոցականների տարիքային առանձնա-հատկություններն ու ազգային ինքնագիտակցության զարգացման մա-կարդակի չափանիշները, «Մանկավարժություն» գիտամեթոդական վեր-լուծական ամսագիր, էջ 26-30, N 1. 2013թ.:
5. Մկրտչյան Տ.Հ., Ազգային ինքնագիտակցության էությունը և սոցիալ-հոգեբանական բնութագիրը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Լարակ, էջ 386-390, Երևան 2013:
6. Մկրտչյան Տ.Հ., Հայ ազգային-հոգևոր նկարագիրը պատմագրական, ազգագրական, հոգեբանական և մշակութաբանական տեսանկյունե-րից, Модернизация образования в контексте современных педагогических парадигм, Сборник научно-образовательных докладов и статей, ст. 243-247, Ереван, АГПУ – 2014.

МКРТЧЯН ТАТЕВИК ОВИКОВНА

СРЕДСТВА РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНОГО САМОСОЗНАНИЯ УЧАЩИХСЯ ЕСТЕСТВЕННО-МАТЕМАТИЧЕСКОГО ЦИКЛА СТАРШЕЙ ШКОЛЫ

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.01- “Теория и история педагогики”.

Защита диссертации состоится 16-ого июня 2016г. в 12:00 на заседании специализированного совета 020 “Педагогики” ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. На современном этапе происходящих изменений в политической, экономической, социокультурной и демографической сферах особое значение приобретают проблемы жизни этноса, этнокультурных ценностей и этнической идентичности. Основой возрождения национального самосознания, нравственности и национально-духовного пробуждения становятся демократия, свободомыслие, распространение национальных идей. В современных глобализационных условиях в общечеловеческой цивилизации признание национальной идентичности, души, характера, менталитета, осознание национальной целостности, знание этнических свойств необходимы для формирования самосознания личности и противостояния вызовам тысячелетия.

Тем не менее проблемы осознания национальной принадлежности, формирования ценностного и уважительного отношения, ответственности к истории и культуре собственного народа преимущественно решаются в системе общего образования.

Цель исследования: выдвинуть средства развития национального самосознания учащихся естественно-математического цикла старшей школы и обосновать педагогическую эффективность их применения.

Задачи исследования:

1.На основе философских, психологических, этнографических, социально-культурных исследований и исторических истоков изучить сущность понятий «нация», «этнос», «национальное самосознание».

2.Анализировать существующий опыт развития национального самосознания учащихся естественно-математического цикла старшей школы, определить уровни развитости национального самосознания, разработать критерии оценки этих уровней.

3.Определить образовательно-воспитательный потенциал учебных дисциплин в целях развития национального самосознания учащихся старшей школы.

4.Разработать тематику экспериментальной альтернативной образовательной программы ,,Армянская литература и этнография’’, рекомендательную тематику для классных часов.

5.Выявить средства развития национального самосознания учащихся естественно-математического цикла старшей школы и экспериментально проверить их эффективность.

Научная новизна исследования:

1.С философской, психолого-педагогической, этнографической точек зрения рассмотрена и в рамках проблемы исследования представлена обобщенная характеристика понятия «национальное самосознание», согласно

которой национальное самосознание – это сравнительно устойчивая система качеств сознательных представлений и оценок этнических различий и этнической общности жизнедеятельности нации.

2.Выявлен и обоснован образовательно-воспитательный потенциал учебных дисциплин естественно-математического цикла старшей школы в целях развития национального самосознания учащихся старшей школы.

3.Определены структурные компоненты процесса развития национального самосознания старших школьников, уровни и критерии развитости национального самосознания.

4. Представлены средства развития национального самосознания учащихся естественно-математического цикла старшей школы, которые включают разработанную нами тематику альтернативной образовательной программы ,,Армянская литература и этнография'', рекомендательную тематику для классных часов, экскурсии, посещение культурных, историко-архитектурных центров, разнообразные воспитательные мероприятия, дискуссии, познавательные и ролевые игры, встречи с деятелями исскуства и литературы, героями-солдатами и военными деятелями.

Теоретическая значимость исследования:

1. В рамках изучаемой проблемы систематизированы теоретические концепции процесса развития национального самосознания, уточнены познавательные, оценочные, поведенческо-деятельностные компоненты и критерии характеристики содержания этого процесса.

2.Теоретически обоснованы возможности учебных дисциплин естественно-математического цикла старшей школы, направленные на формирование национального самосознания школьников.

3.Обоснованы средства и педагогические условия развития национального самосознания старших школьников в процессе учебной и внеучебной деятельности.

Практическая значимость:

1. Результаты теоретических и практических исследований могут применяться на разных уровнях общеобразовательной школы, в начальноспециальных и среднеспециальных образовательных учреждениях, направленных на развитие национального самосознания, формирование профессиональной компетентности педагогов.

2.Результаты исследования могут быть применены на курсах переподготовки учителей, в разработках предметных стандартов и тематики классных часов, а также в проведении анализа, диагностики, оценивания процессов, имеющих социально-культурное содержание.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений. Объем работы составляет 157 компьютерных страниц. Исследовательская работа включает 11 таблиц, 7 рисунков и 4 приложений.

MKRTCHYAN TATEVIK HOVIK

MEANS OF NATIONAL IDENTITY DEVELOPMENT OF LEARNERS IN NATURAL SCIENCES AND MATHEMATICS ACADEMIC GROUPS AT HIGH SCHOOLS

Thesis for degree of candidate of pedagogical sciences, specialty 13.00.01 ''Theory and history of Pedagogy''.

The defense of the dissertation will be held on the 16th of June, 2016 at 12:00 at the session of the Special Board of Pedagogy 020 HAC (Higher Attestation Commission) on awarding degrees under the Kh. Abovyan Armenian State Pedagogical University, address: Tigran Mets 17 Avenue, 0010 Yerevan.

SUMMARY

Research actuality: Issues related to the national life, national-cultural values and national identity gain unique importance in the current era of political, economic, socio-cultural and demographic changes. Irreversible processes of globalization occur in all spheres of life which gradually result in the development of global identity of humanity. In this context, awareness of national identity, preservation of national character, knowledge of national values, their acceptance and reflection by the rising generation is an important issue for different nationalities. The recognition of national spirit, character, identity, the knowledge of national values and symbols are also important for the respect and tolerance towards other nationalities, for intercultural dialogue, as well as for learning to live in a multicultural world. To resolve the above mentioned issues, the necessity arises to clarify the methodological approaches for the development of national self-awareness of pupils studying in schools.

The aim of the research is to give theoretical and practical grounding of the pedagogical efficiency of usage of means for developing the national self-awareness of pupils studying in the natural sciences streams of high schools.

The issues of the research are to:

1.explore the essence of the concepts of "nation", "ethnos", "national self-consciousness" based on the primary sources of philosophical, psychological, ethnic, socio-cultural and historical research

2.analize the current experience of national identity development of learners in natural sciences and mathematics academic groups at general high schools, identify the levels of development of national consciousness and develop criteria for characterizing these levels

3.identify the educational and disciplinary potential of educational courses in the process of development of national consciousness of senior pupils

4. Develop experimental alternative educational program subject matters on “Armenian literature and ethnography” and substantiate pedagogical efficiency of its study on the development of national consciousness among schoolchildren.

5. Propose for learners of Humanities in Higher school a complex of means for verifying the effectiveness of national self-consciousness and to test its efficiency in experiments.

Scientific innovation of the research:

1. from the philosophical, pedagogical-psychological, sociological-cultural and ethnographical viewpoints it has been observed and in the frame-work of the main issue of the research has been given the general characteristics of the concept of ,,national self-consciousness, according to which it is a relatively stable system of conscious notions and assessment of the nation's ethno-identifying and ethno-unifying vital activities

2. it has been revealed and justified the educational and disciplinary potential of school subjects taught in natural sciences and mathematics academic groups at high schools in the process of development of national consciousness of senior pupils

3. there have been decided the sctructural components of the process of development of national consciousness of senior pupils, standards and levels of development of national consciousness

4. the national self-development means of high school learners of natural-mathematical stream have been presented. It includes the content of the extended course of ,, Armenian literature and ethnography,, worked out by us for studying in the constituent parts of school and preoriented classes of the natural-mathematical stream, realising excursions,visiting cultural places, historical-architectural monuments, initiating a variety of arrangements, such as: meetings with writers, heroes, artists, honorary military figures, and so on.

Theoretical significance of the research:
1.within the framework of the studied issue there have been coordinated the theoretical concepts related to the development of national consciousness, adjusted the cognitive, evaluative, behavioral-functional components of national identity development content and criteria describing them
2.theoretically, there have been justified the possibilitites of school subjects taught in natural sciences and mathematics academic groups at high schools in the process of development of national consciousness of pupils
3.there have been proved the usefulness of means in development of national identity of high school pupils in educational and out of school processes.
Practical significance of the research:
1.theoratical and practical study results of the research issue can be applied in general, preliminary and secondary educational institutions to increase the level of development of national consciousness of learners, in the organization of the process, in formation of professional competence of teaching teachers
2.the research results may be useful in other academic groups of high school for mastering educational courses, teacher trainings, development of curriculum standards as well as for the analysis, diagnosis and evaluation of the processes of socio-cultural content
The structure of dissertation: The thesis consists of introduction, three chapters, conclusion, list of references and annexes. It consists of 157 typed pages, includes 11 tables, 7 charts and 4 appendices.